Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմը (այսուհետ՝ Մարզպետի աշխատակազմ) հայտարարում է Մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնում փորձագետ ներգրավելու համար

Փորձագետը ներգրավվում է Մարզպետի աշխատակազմում իրավաբանական ոլորտի գործառույթներ իրականացնելու նպատակով:

Աշխատանքային պարտականություններն են՝

ա. Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների նախագծերի ներկայացում,
բ. իրավական ակտերի նախագծերի մշակում,
գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից մշակվող իրավական ակտերի ուսումնասիրություն,
դ. իրավական ակտերի վերաբերյալ եզրակացությունների նախագծերի ներկայացում:

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաև իրավական ակտերի մշակման փորձառություն:

Փորձագետը ներգրավվում է 2 /երկու/ ամիս ժամկետով՝ 2023 թվականի մայիսի 15-ից մինչև 2023 թվականի հուլիսի 15-ը:

Աշխատավարձը 267072 /երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու/ Հայաստանի Հանրապետության դրամ:

Դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

* դիմում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի անունով.
* տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայական(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
* արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

* մեկ գունավոր լուսանկար 3Х4 սմ չափսի,

* անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը

* հայտարարություն՝ նշված սահմանափակումների բացակայության մասին.

- պաշտոնից ազատվել կամ ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու,

- օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու,

- օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու,

- «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու,

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Ընտրությունը կատարվելու է դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով:
Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ, կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Աշխատավայրը՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 09:00 – 13:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2023թ. մայիսի 12-ը ներառյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմ /ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16, Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին, հեռախոս 0312 4-90-00-156/ էլեկտրոնային փոստի հասցեն՝ shirak.andznakazm@mta.gov.am):

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
աշխատակազմի գլխավոր քարտուղար
պարոն Արսեն Աբրահամյանին

քաղաքացի ----------ից
(անունը, ազգանունը)

---------- հեռախոսահամարը

---------- էլեկտրոնային հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ,
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ,
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ,
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____ էջ:
5. Այլ _____ էջ:

Առդիր՝ _____ էջ:

_____
(ստորագրություն, անունը, ազգանունը)

_____
(դիմումը ներկայացնելու ամսաթիվը)

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: